# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հատուկ կարեւորություն տալով Համագործակցության մասնակից պետությունների բնակչության առողջության ամրացման եւ պահպանության հարցերին,

հաշվի առնելով Համագործակցության մասնակից պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ առողջապահության բացառիկ կարեւոր նշանակությունը,

ձգտելով պահպանել եւ զարգացնել առողջապահության բնագավառում ձեւավորված փոխադարձ կապերը,

ընդունելով առողջապահության, դեղորայքի եւ բժշկական տեխնիկայի արտադրության, Համագործակցության մի մասնակից պետության քաղաքացիներին մյուս պետության տարածքում բժշկական օգնության ցուցաբերման, տարերային աղետների եւ աղետների հետեւանքների վերացման, տարբեր հետազոտությունների անցկացման համար տեղեկության փոխանակման բնագավառներում համագործակցության արդիականությունը,

ելնելով բարիդրացիության, իրավահավասարության, ինքնիշխանության հարգման, փոխշահավետության եւ փոխօգնության սկզբունքներից,պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը մտադիր են խորհրդակցություններ անցկացնել եւ փոխանակել փորձը առողջապահության կառավարման համակարգի կատարելագործման, այդ թվում քաղաքացիների բժշկական ապահովագրություն մտցնելու, առողջապահության կազմակերպման առաջադեմ այլ ձեւերի ներդրման, բժշկական ծառայությունների շուկայի ստեղծմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ:

## ՀՈԴՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը չեն թույլատրի բժշկական օգնության կազմակերպման, սանիտարահիգիենիկ չափանիշներ մտցնելու եւ կատարման նկատմամբ հսկողության հետ կապված գործողություններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ այլ պետությունների քաղաքացիների առողջության վրա:

## ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը, ղեկավարվելով մարդասիրության սկզբունքներով, պարտավորվում են Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիներին ցուցաբերել անհետաձգելի եւ անհապաղ բժշկական օգնություն՝ փոխադարձ ծախսերը առանց հատուցելու, ծրագրային բժշկական օգնություն առողջապահության մարմինների եւ հաստատությունների ուղեգրով՝ ուղարկող կողմի կողմից ծախսերի փաստացի հատուցմամբ կամ հատուկ երկկողմ պայմանագրերով նախատեսված պայմաններով:

## ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են համագործակցել.

առողջապահության եւ բժշկագիտության առաջնային եւ արդիական հիմնախնդիրների վերաբերյալ համատեղ ծրագրերի մշակման եւ իրականացման բնագավառում,

շրջանավարտներին, մասնագետներին ներկայացվող որակավորման համաձայնեցված պահանջների հիման վրա բժշկական, գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման, օգտագործման եւ որակավորման բարձրացման բնագավառում,

բժշկական տեխնիկայի սարքերի, դեղորայքի, ախտորոշիչային միջոցների եւ իմունակենսաբանական դեղորայքի մշակման եւ արտադրության, այդ թվում՝

համաձայնեցված, ինչպես նաեւ բժշկական նշանակության արտադրանքի որակի գրանցման, սերտիֆիկացման եւ հսկողության չափանիշների մշակման եւ հաստատման բնագավառում,
քաղաքացիների առողջության պահպանման պահանջմունքներին համապատասխան փորձարարական, կլինիկական եւ պրոֆիլակտիկ բժշկության ոլորտում հիմնարար եւ կիրառական գիտական հետազոտությունների զարգացման բնագավառում,
սանիտարական օրենսդրության մշակման, սանիտարահիգիենիկ չափանիշների ներդրման, իմունապրոֆիլակտիկայի, տարածքների սանիտարական պահպանության միջոցառումների կազմակերպման եւ անցկացման համակարգման բնագավառում,
բնակչության առողջական վիճակի, այն ձեւավորող գործոնների, առողջապահության հիմնական ցուցանիշների եւ ցուցաբերվող բժշկական օգնության հարցերով բժշկական եւ այլ տեղեկության փոխանակման բնագավառում,
ուսումնատեղեկատվական եւ գիտական բնույթի միջոցառումների անցկացման բնագավառում,
առողջապահության մարմինների եւ հաստատությունների միջեւ ուղղակի կապերի ընդլայնման բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 5

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են.
օգնություն ցուցաբերել տարերային, էկոլոգիական աղետների եւ այլ պատուհասների, համաճարակների հետեւանքների վերացման գործում, ինչպես նաեւ նման օգնության ցուցաբերման գործում օժանդակել այլ երկրների ջանքերին, միջազգային եւ հասարակական կազմակերպություններին,
ապահովել Չեռնոբիլի ԱԷԿ-ում աղետի բժշկական հետեւանքների նվազեցման, Մերձարալյան, Սեմիպալատինսկի էկոլոգիական աղետի գոտիներում, ինչպես նաեւ էկոլոգիական, տարերային եւ այլ աղետների վայրերում գործողությունների համակարգումը:

ՀՈԴՎԱԾ 6

Պայմանավորվող կողմերը ճանաչում են բժշկական, դեղագործական եւ առողջապահության համակարգի այլ աշխատակիցների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում պետական եւ պաշտոնապես նրանց հավասարեցված այլ հաստատություններում ստացված կրթության, նրանց որակավորման եւ գիտական աստիճանների եւ կոչումների շնորհման մասին փաստաթղթերը:

ՀՈԴՎԱԾ 7

Պայմանավորվող կողմերը Համագործակցության մասնակից պետությունների միջեւ երկկողմ պայմանագրերի կնքման միջոցով իրագործում են համագործակցության ուղղությունները եւ պայմանները:

ՀՈԴՎԱԾ 8

Պայմանավորվող կողմերը ստեղծում են առողջապահության բնագավառում համագործակցության Անկախ Պետությունների Համագործակցության Խորհուրդ՝ կազմված այդ պետությունների առողջապահության նախարարներից եւ պետական գլխավոր սանիտարական բժիշկներից: Հաստատել այդ Խորհրդի մասին կից Կանոնադրությունը: Խորհրդի աշխատանքի տեխնիկական ապահովման նպատակով ստեղծել Քարտուղարություն:

ՀՈԴՎԱԾ 9

Առողջապահության բնագավառում համագործակցության Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով եւ ցանկացած մասնակցի համար ինքնաբերաբար կերկարաձգվի մեկամյա ժամանակաշրջաններով, եթե նա համապատասխան ժամկետի ավարտից երկու ամիս առաջ չտեղեկացնի առողջապահության բնագավառում համագործակցության մասին Խորհրդին Համաձայնագիրը փոփոխելու կամ նրանից դուրս գալու իր մտադրության մասին:

ՀՈԴՎԱԾ 11

Ցանկացած պետություն կարող է միանալ սույն Համաձայնագրին՝ առողջապահության բնագավառում համագործակցության Խորհրդին համապատասխան ծանուցում տալու միջոցով: Համաձայնագիրը այդ պետության համար ուժի մեջ է մտնում բոլոր նրա մասնակիցների կողմից միանալու համար համաձայնությունը ստանալուց հետո:

ՀՈԴՎԱԾ 12

Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել այն ստորագրած կողմերի համաձայնությամբ:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի հունիսի 26-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նպատակն է Համագործակցության մասնակից պետությունների համակողմանի փոխգործակցությունը եւ համագործակցությունը առողջապահության, բժշկագիտության եւ բժշկական տեխնիկայի, դեղագործության պահպանման համար՝ բնակչության առողջության պահպանման, վերականգնման եւ բարելավման նպատակով:

### ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խորհրդի անդամներն են Համագործակցության կազմի մեջ մտնող պետությունների առողջապահության նախարարները եւ պետական գլխավոր սանիտարական բժիշկները:
2. Անդամակցությունը Խորհրդին Համագործակցության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ինքնիշխան պետության կամաարտահայտությունն է:
3. Անդամակցությունը Խորհրդին իրականացվում է Համագործակցության կազմի մեջ մտնող ինքնիշխան պետությունների ներկայացուցիչների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:
4. Համագործակցության կազմի մեջ մտնող պետությունները կարող են միանալ սույն Կանոնադրությանը.
ստորագրելով այն՝ հաստատման վերաբերյալ վերապահում չկատարելով,
ստորագրելով այն՝ հետագայում այն հաստատելու պայմանով:
5. Խորհրդի որոշումները երաշխավորական բնույթ ունեն:
6. Անդամակցությունը Խորհրդին խոչընդոտ չի հանդիսանում առողջապահության բնագավառում այլ բազմակողմ համաձայնագրերի կնքման համար:

## ԲԱԺԻՆ 2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բնակչության առողջության պահպանության միասնական համամարդկային սկզբունքների եւ գաղափարների ձեւավորում:
2. Առողջապահության բնագավառում գիտատեխնիկական համագործակցության համատեղ ծրագրերի իրականացման համար երաշխավորությունների պատրաստում, փորձաքննություն եւ մշակում, միասնական տեղեկատվական ցանցերի ստեղծում:
3. Առավել տարածված վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների նախազգուշացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության անցկացում:
4. Աղետների, էկոլոգիական եւ տարերային այլ աղետների բժշկական հետեւանքների նվազեցման համար գործունեության համակարգում:
5. Համագործակցության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր պետության տարածքում բնակչության առողջական վիճակի, տարերային աղետների եւ համաճարակների, վթարային իրավիճակների մասին տեղեկություն:
6. Բժշկական, գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման հարցերի համաձայնեցում:
7. Առողջապահության պետական եւ միջազգային քաղաքականության բնագավառում հիմնախնդիրների լուծման նպատակով Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունների համար երաշխավորությունների մշակում, միջկառավարական համաձայնագրերի եւ պայմանագրերի կնքման համար առողջապահության մասին նյութերի պատրաստում:
8. Բժշկական տեխնիկայի եւ սարքերի, դեղորայքի, բուժիչ եւ դիետիկ ապրանքների պահանջմունքների եւ արտադրության մասին տեղեկություն:
9. Առողջապահության բնագավառում համատեղ գործունեության հետ կապված այլ միջոցառումներ:

## ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

1. Առողջապահության նախարարի հանձնարարությամբ Խորհրդում նրա լիազորությունները կարող է իրականացնել նախարարի տեղակալը: Խորհրդի նիստին կարող են մասնակցել խորհրդականներ, փորձագետներ, խորհրդակցական ձայնի իրավունքով այլ ներկայացուցիչներ:
2. Խորհուրդը հերթական նիստը գումարում է տարին առնվազն երկու անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում, (Խորհրդի անդամներից մեկի խնդրանքով) գումարում է հատուկ նիստեր:
3. Խորհրդի հերթական եւ հատուկ նիստերի անցկացման վայրը որոշվում է նրա մասնակիցների նախնական պայմանավորվածությամբ:
4. Խորհուրդը հերթական (հատուկ) նիստի անցկացման ժամանակամիջոցի համար իր կազմից ընտրում է նախագահ: Նախագահը պահպանում է իր լիազորությունները միայն նիստի անցկացման ժամանակամիջոցի ընթացքում:
5. Խորհրդի հերթական կամ հատուկ նիստի անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կրում է ընդունող կողմը:
6. Խորհրդի որոշումները ձեւակերպվում են արձանագրությամբ:

## ԲԱԺԻՆ 4. ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սահմանում է առողջապահության բնագավառում համագործակցության հիմնական ուղղությունները՝ որոշակի ժամանակամիջոցի համար:
2. Երաշխավորում է գիտականորեն հիմնավորված հիգիենիկ չափանիշներ, սանիտարահամաճարակային միջոցառումներ, այդ թվում՝ բժշկակենսաբանական չափանիշներ, անվանացանկեր եւ նշումներ, բժիշկների գործունեության կանխարգելիչ եւ առողջարանադիագնոստիկ դեղորայքի, բժշկական նշանակության այլ սարքերի պատրաստման եւ հսկողության տեխնոլոգիաների արտոնագրման կարգը, որակավորման պահանջները եւ այլն:
3. Ստեղծում է առողջապահության միջպետական ծրագրերի մշակման, փորձաքննության եւ իրականացման հանձնաժողովներ, որոշում է դրանց

գործունեության կարգը, ֆինանսավորման աղբյուրները եւ ծավալը:
4. Նշանակում եւ ազատում է Խորհրդի գործադիր քարտուղարին, հաստատում է Խորհրդի թվաքանակը:

## ԲԱԺԻՆ 5. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Քարտուղարությունը բաղկացած է գործադիր քարտուղարից եւ աշխատակազմից:
2. Խորհուրդը նշանակում է Գործադիր քարտուղարին իր կողմից սահմանած ժամկետով:
3. Քարտուղարության աշխատակազմը նշանակվում է գործադիր քարտուղարի կողմից:
4. Քարտուղարությունը ապահովում է Խորհրդի նիստերի նախապատրաստումը եւ անցկացումը, կազմակերպում է ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքը, գործավարություն է կատարում Խորհրդի հարցերի վերաբերյալ, իրականացնում է ֆինանսական, տեղեկատվական, հրատարակչական գործունեություն:
5. Քարտուղարության գործունեության ֆինանսավորումը իրականացնում են Համագործակցության մասնակից պետությունները՝ հավասար բաժնային մասնակցությամբ:
6. Քարտուղարության աշխատավայրն է Մինսկ քաղաքը: Այն պետությունը, որի տարածքում աշխատում է Քարտուղարությունը, նրա գործունեության համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ:

## ԲԱԺԻՆ 6. ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ (ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

1. Համատեղ գործունեության հիմնախնդիրներով (ուղղություններով) հանձնաժողովներ ստեղծվում են Խորհրդի որոշմամբ՝ առողջապահության եւ բժշկագիտության բնագավառում առանձին հիմնախնդիրների վերաբերյալ երաշխավորությունների վերլուծության եւ մշակման համար:
2. Հիմնախնդիրներով հանձնաժողովի ստեղծման ժամանակահատվածը, դրա կազմը, լիազորությունները, ղեկավարները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:
3. Հանձնաժողովների գործունեության ֆինանսավորումը իրականացնում են Խորհրդի մասնակիցները՝ նրանց կողմից սահմանված կարգով:
4. Հանձնաժողովների գործունեությունը լսվում է Խորհրդի նիստերում:
5. Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները հանձնաժողովներին տրամադրում են նրանց գործունեության համար անհրաժեշտ տեղեկություն:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի հունիսի 26-ից: